

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒՆԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1) **Բնական աշխարհագրության ճյուղերից է.**


- 1) սոցիալական աշխարհագրությունը
- 2) հողերի աշխարհագրությունը
- 3) մշակույթի աշխարհագրությունը
- 4) քաղաքական աշխարհագրությունը

2) **Երևանի հեռավորությունը Հարավային բևեռից աստիճաններով կլինի.**

- 1) 130°
- 2) 86,5°
- 3) 120°
- 4) 96,5°

3) **Նկար 1.- ում Ը տառով նշված կետի աշխարհագրական կոորդինատները որո՞նք են:**

- 1) հս. լ. 20°արլ. ե. 20°
- 2) հվ. լ. 60° արլ. ե. 60°
- 3) հս. լ. 20° արմ. ե. 20°
- 4) հվ. լ. 60° արմ. ե. 60°



4

Երկրի օրական պտույտի հետևանք է.

- 1) երկնքի ամպամածությունը
- 2) պասսատների առաջացումը
- 3) մուսսոնների առաջացումը
- 4) ժամերի տարբերությունը

5

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Երկրագնդի առանցքի՝ ուղեծրի հարթության նկատմամբ ունեցած թեքության աստիճանային մեծությունը համապատասխանում է բևեռային շրջագծերի աստիճանային մեծությանը:
- 2) Տարբեր քարտեզներից կազմված գիրքը կոչվում է ատլաս:
- 3) Աշխարհագրական երկայնությունը Երկրի մակերևութի որևէ կետի հեռավորությունն է հասարակածից՝ արտահայտված աստիճաններով:
- 4) Քարտեզում կամ գլոբուսի վրա միջօրեականների և գուգահեռականների հատումից առաջացած ցանցը կոչվում է աստիճանացանց:

6

1 : 7000 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 6 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.

- 1) 4 200 կմ
- 2) 4,2 կմ
- 3) 42 կմ
- 4) 420 կմ

7

Բնութագրումով որոշել Երկրի շերտը.

Երկրի ամենավերին և ամենաբարակ շերտն է: Այն կազմված է համեմատաբար թեթև ապարներից: Այդ շերտն է.

- 1) վերին միջնապատյանը
- 2) Երկրի միջուկը
- 3) ստորին միջնապատյանը
- 4) երկրակեղևը

8

Նշվածներից ո՞րն աշխարհագրական թաղանթի հատկանիշ չէ.

- 1) մածուցիկություն
- 2) վերընթաց գոտիականություն
- 3) ամբողջականություն
- 4) հորիզոնական զոնայականություն

9

Ի՞նչ գագ է արտագատվում լուսասինթեզի ժամանակ.

- 1) ազոտ
- 2) ածխաթթու գագ
- 3) թթվածին
- 4) հելիում

10

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Կենդանի օրգանիզմների քանակը նվազում է մթնոլորտում՝ ըստ բարձրության, իսկ քարոլորտում և ջրոլորտում՝ ըստ խորության:
- 2) Աշխարհագրական թաղանթում դժվար է գտնել մի անկյուն, որտեղ չլինեն կենդանի օրգանիզմներ:
- 3) Սնկերի տեսակների թիվն անցնում է 100 000-ը, իսկ ողնաշարավորներինը՝ 50 000-ը:
- 4) Ամենից շատ բույսեր ու կենդանիներ կան Երկրի մակերևույթի մոտ:

11

Որքա՞ն կլիմի արեգակնային ճառագայթների անկման անկյան մեծությունը հունիսի 22-ին հս.լ. 50°-ի վրա:

- 1) 47,5°
- 2) 26,5°
- 3) 63,5°
- 4) 53,5°

12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Միջերկրածովյան կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
- 2) Մուսսոնային կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
- 3) Մերձարկտիկական գոտու գետերը հորդանում են ձմռանը:
- 4) Սառցադաշտային սնում ունեցող գետերը հորդանում են աշնանը:

13

Բնութագրումով որոշել բնական զոնան.

Այս բնական զոնան տարածվում է մեծամասամբ հյուսիսային կիսագնդում և ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի հյուսիսային շրջաններն ու նրանց հարող կղզիները: Կլիման մերձարկտիկական է: Ծառեր գրեթե չեն աճում, և տարածված են մամուռներ ու քարաքոսներ: Ո՞ր բնական զոնան է.

- 1) տայգա
- 2) սառցային
- 3) սավաննա
- 4) տունդրա

14

Ի՞նչ հողեր են տարածվում սավանաների զոնայում:

- 1) կարմրադեղին
- 2) սևահողերի
- 3) կարմրագորշ
- 4) դարչնագույն

15

Ո՞ր լեռնաշղթայի շարունակությունն է տարածվում Անտարկտիդայում.

- 1) Ատլաս
- 2) Ալպեր
- 3) Ապալաչներ
- 4) Անդեր

16

Նշվածներից ո՞ր անապատն է տարածվում Ավստրալիայում:

- 1) Տակլա-Մական
- 2) Սահարա
- 3) Մեծ ավազային
- 4) Կալահարի

17

Նշվածներից ո՞ր ջրվեժն է գտնվում Հարավային Ամերիկայում:

- 1) Լիվինգստոնի
- 2) Իգուասու
- 3) Վիկտորիա
- 4) Նիագարա

18

Ընտրել Հարավային Ամերիկայի հարթավայրերի և դրանց բնութագրիչների համապատասխանությունների ճիշտ շարքը.

ա. Պատագոնիա
բ. Բրազիլական
գ. Լա Պլատայի
դ. Ամազոնի

1. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի արևելք, առավելապես տարածվում են խոնավ հասարակածային անտառներ:
2. Մարահարթ է, կիսաանապատ, տարածվում է բարեխառն գոտում:
3. Ընդարձակ հարթավայր է, կան պլատֆորմի կարծր բյուրեղային հիմքի մերկացած տեղամասեր՝ վահաններ, տարածվում են սավաննաներ՝ կամպոս:
4. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի հարավ, նրա միջով է հոսում Պարանա գետը:

- 1) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 2) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 3) ա-2, բ-3, գ-1, դ-4
- 4) ա-3, բ-1, գ-2, դ-4

19

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հյուսիսային Ամերիկյան Եվրասիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 2) Հյուսիսային Ամերիկյան ամբողջությամբ արևմտյան կիսագնդում է:
- 3) Հյուսիսային Ամերիկայի փոքր մասը հարավային կիսագնդում է:
- 4) Հյուսիսային Ամերիկյան Հարավային Ամերիկային միանում է Պանամայի պարանոցով:

20

Նշված գործող հրաբուխներից ո՞րն է գտնվում Հյուսիսային Ամերիկայում:

- 1) Պոպոկատեպետլ
- 2) Վեզուվ
- 3) Կամերուն
- 4) Կոտոպախի

21

Գոնդվանայի մաս հանդիսացող նշված մայրցամաքներից ո՞րն է համարվում հարաբերականորեն անշարժ:

- 1) Հարավային Ամերիկա
- 2) Աֆրիկա
- 3) Ավստրալիա
- 4) Անտարկտիդա

22

Նշվածներից ո՞ր ծառն է առավել բնորոշ Աֆրիկային:

- 1) սեյբա
- 2) էվկալիպտ
- 3) բաոբաբ
- 4) սեքվոյա

23

Եվրասիայի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մայրցամաքի հյուսիսն ամբողջ տարին անտարկտիկական ցուրտ և չոր օդային զանգվածների ազդեցության տակ է:
- 2) Մայրցամաքը տարածվում է հյուսիսային կիսագնդի բոլոր կլիմայական գոտիներում:
- 3) Տարածքում ձևավորվում են օդային զանգվածների բոլոր չորս հիմնական տիպերը:
- 4) Տարածքի մեծ մասի կլիման ձևավորվել է բարեխառն օդային զանգվածների ազդեցությամբ:

24


Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի առաջին փուլի կարևոր իրադարձությունն է.

- 1) Չեխոսլովակիայի բաժանումը
- 2) ԽՍՀՄ-ի կազմավորումը
- 3) Գերմանիայի վերամիավումը
- 4) ԱՄՆ-ի կազմավորումը

25

Դիագրամում տրված է երկրագնդի բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների: Ո՞ր բարձրության գոտուն է համապատասխանում Ա տառը.

- 1) 1000-2000 մ
- 2) մինչև 200 մ
- 3) 200-500 մ
- 4) 500-1000 մ



26

Ըստ այս տեսության հեղինակի՝ բնությունը և՛ սահմաններ է դնում, և՛ հնարավորություններ է ստեղծում իր յուրացման համար: Բնության վրա մարդուներգործության եղանակները և հարմարվածությունը բնությանը կախված են տվյալ ժողովրդի ավանդույթներից և ապրելակերպից: Ո՞վ է տեսության հեղինակը:

- 1) Հելֆորդ Մաքինդեր
- 2) Վիդալ դը Լա Բլաշ
- 3) Ռուդոլֆ Չելեն
- 4) Կառլ Հաստիոֆեր

27

Նշվածներից ո՞ր երկիրն է միատարր ազգային կազմի տեսանկյունից:

- 1) Ռուսաստան
- 2) Ճապոնիա
- 3) Հնդկաստան
- 4) Ինդոնեզիա

28

Համաշխարհային տնտեսության ճյուղերից ո՞րն է առաջատար քաղցրահամ ջրի սպառման ծավալով.

- 1) տեղեկատվական ոլորտը
- 2) արդյունաբերությունը
- 3) ծառայությունների ոլորտը
- 4) գյուղատնտեսությունը

29

Համաշխարհային տնտեսության ո՞ր հատվածին է պատկանում ձկնորսությունը:

- 1) չորրորդային
- 2) առաջնային
- 3) երկրորդային
- 4) երրորդային



քարտեզ 1

30

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1–ում նշված է տառով.

- 1) Հավանա
- 2) Մեխիկո
- 3) Օտտավա
- 4) Բելմոպան

31

Ո՞ր ծովն է քարտեզ 1–ում նշված Ա տառով.

- 1) Կարիբյան
- 2) Բաֆինի
- 3) Սարգասյան
- 4) Բոֆորտի

32

Կենտրոնական Ասիա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Խոշոր գետերից են Ամուդարյան և Սիրդարյան:
- 2) Կլիման բարեխառն խիստ ցամաքային է:
- 3) Խոշոր լճերից են Բալխաշը և Արալյանը:
- 4) Մակերևույթը լիովին հարթավայրային է:

33

Հարավարևմտյան Ասիայի տարածաշրջանի մեջ ո՞ր թերակղզին է մտնում.

- 1) Հնդկաչին
- 2) Հինդուստան
- 3) Արաբական
- 4) Կորեական

34

Անասնապահության ո՞ր ճյուղի գլխաքանակով է Հնդկաստանն աշխարհում առաջատարներից.

- 1) ձիաբուծություն
- 2) խոշոր եղջերավոր անասնապահություն
- 3) խոզաբուծություն
- 4) մանր եղջերավոր անասնապահություն

35

Աֆրիկայում գտնվող պետություններից որո՞նք են միապետություններ:

- 1) Քենիան և Նիգերիան
- 2) Լիբիան և Անգոլան
- 3) Եթովպիան և Գանան
- 4) Լեսոտոն և Մարոկկոն

36

Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչությունը հիմնականում կենտրոնացած է հարավարևմտյան շրջաններում:
- 2) Լայն տարածում ունեն մերինոս ցեղատեսակի ոչխարները:
- 3) Աշխարհում առաջատարներից է այլումինի հումքի՝ բոքսիտների արյունահանմամբ և արտահանմամբ:
- 4) Երկրում մշակվող գլխավոր հացահատիկային մշակաբույսը ցորենն է:

37

ԱՄՆ-ի «օգտակար հանածո — հանքավայր» զույգերից ընտրել սխալը.

- 1) պղինձ — Ժայռոտ լեռներ
- 2) քարածուխ — Ապալաչներ
- 3) նավթ — Կալիֆոռնիա
- 4) երկաթ — Մեքսիկական ծոց

38

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՌԴ-ում գերակշռող կրոնական ուղղությունն է լամայականությունը:
- 2) ՌԴ բնակչության տեղաբաշխումը խիստ հավասարաչափ է:
- 3) Բնակչության թվաքանակով աշխարհի երրորդ պետությունն է Չինաստանից և Հնդկաստանից հետո:
- 4) Ըստ պետական կարգի՝ նախագահական դաշնային հանրապետություն է:

39

Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տարաբնակեցման ցանցում գերակշռում են քաղաքային բնակավայրերը:
- 2) Հարուստ է սառցադաշտային ծագման լճերով:
- 3) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 4) Բոլոր երկրներն ունեն ելք դեպի Համաշխարհային օվկիանոս:

40

Բնութագրումով որոշել պետությունը.

Եվրոպական այս պետության անունը թարգմանաբար նշանակում է Սառցե երկիր: Սակայն այն բացառիկ հարուստ է գեյզերներով: Երկրաջերմային էներգիան լայնորեն կիրառվում է բնակարանների և ջերմոցների ջեռուցման համար: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Նորվեգիան
- 2) Իռլանդիան
- 3) Ֆինլանդիան
- 4) Իսլանդիան

41


Ո՞ր լեռնաշղթան է եզերում Վանա լիճը հարավից:

- 1) Ծաղկավետ
- 2) Հայկական Տավրոս
- 3) Ծաղկանց
- 4) Հայկական պար

42

Նշվածներից ո՞րն է Մռավի լեռնաշղթայի ամենաբարձր լեռնագագաթը.

- 1) Մեծ Քիրս
- 2) Դիզափայտ
- 3) Ծարասար
- 4) Գոմշասար



քարտեզ 2

43

Քարտեզ 2-ում Փամբակի լեռնաշղթան ո՞ր տառով է նշված.

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ

44

Քարտեզ 2–ում Սպանդարյանի ջրային էլեկտրակայանը ո՞ր տառով է նշված.

- 1) Ը
- 2) Զ
- 3) Ե
- 4) Է

45

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գյումրի և Վանաձոր քաղաքները վարչական, գիտակրթական ու մշակութային կենտրոններ են, արդյունաբերական, երկաթուղային ու ավտոխճուղային ճանապարհների հանգույց:
- 2) Արտաշատ և Արմավիր քաղաքները ցեմենտի արտադրության կենտրոններ են:
- 3) Քաջարան և Ախթալա քաղաքները զարգացել են իրենց մոտակայքում գտնվող հանքային հարստությունների առկայության և շահագործման շնորհիվ:
- 4) Մեծամորը և Ծաղկաձորը միագործառության քաղաքներ են:

46

ՀՀ ո՞ր քաղաքն ունի առողջարանային նշանակություն.

- 1) Վարդենիսը
- 2) Մասիսը
- 3) Ջերմուկը
- 4) Գավառը

47

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ–ն անցումային տնտեսություն ունեցող երկիր է:
- 2) ՀՀ տնտեսությունը մեծապես կախված է ներմուծվող էներգակիրներից:
- 3) ՀՀ տնտեսությունն ունի բազմաճյուղային կառուցվածք:
- 4) ՀՀ–ն տնտեսության զարգացման մակարդակով հետինդուստրիալ երկիր է:

48

Երկաթուղային կայարաններ են.

- 1) Վայքը և Եղեգնաձորը
- 2) Գորիսը և Միսիանը
- 3) Մարալիկը և Արթիկը
- 4) Գավառը և Մարտունին

49

Վայոց ձորի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են թռչնաբուծությունը և խոզաբուծությունը:
- 2) Ցածրադիր գոտու ոռոգելի հողերում տարածված է խաղողագործությունը և պտղաբուծությունը:
- 3) Մարզի զարգացման գործում մեծ դեր ունի առողջարանային տնտեսությունը:
- 4) Գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասն արոտավայրեր են:

50

Լոռու մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) պղնձաձուլությունը
- 2) քիմիական արդյունաբերությունը
- 3) ալյումինաձուլությունը
- 4) պանրի արտադրությունը

51

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Թթվային անձրևների առաջացման միակ պատճառն Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթներն են:
- 2) Օդում մեծ քանակությամբ փոշու առկայության պատճառով խոշոր քաղաքներում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան դրանցից դուրս:
- 3) Ջերմոցային էֆեկտի ազդեցության մեծացումը պայմանավորված է մթնոլորտում մեթանի և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ:
- 4) Օզոնային շերտի քայքայումը բնորոշ է միայն բարեխառն գոտուն:

52

Նշվածներից ո՞րը չի համարվում մթնոլորտն աղտոտող աղբյուր:

- 1) բնության հատուկ պահպանվող տարածքները
- 2) ավտոտրանսպորտը
- 3) ջերմաէլեկտրակայանները
- 4) թռչնաբուծական ֆերմաները

53

Ընդերքի ռեսուրսների որոշ տեսակներ խնայելու արդյունավետ միջոցառում է.

- 1) փակ եղանակով արդյունահանման փոխարինումը բաց եղանակի
- 2) անընդհատ նոր հանքավայրերի շահագործումը
- 3) շահագործվող հանքավայրերում պոչամբարների ստեղծումը
- 4) «հումքային ռեսուրսներ-արտադրություն-սպառում-երկրորդային հումքային ռեսուրսներ» շղթայի ներդրումը

54

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Շրջակա միջավայրի մոնիթորինգը բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումը, գնահատումն ու վերահսկումն է:
- 2) Անտառապատ տարածքների կրճատման հետևանք է թթվային անձրևների առաջացումը:
- 3) Կոնսումենտները սննդառության շղթայի այն օղակն են, որոնք անօրգանական նյութերից սինթեզում են օրգանական նյութեր:
- 4) Արգելոցը ցամաքի կամ ջրային տարածքի տեղամաս է, որտեղ պահպանվում են բնական միջավայրի կամ կենդանի օրգանիզմների մեկ կամ մի քանի տեսակներ:

55

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սովյալների և թերսնվողների գոտին ձգվում է առավելապես հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնություններում:
- 2) Պարենային համամոլորակային հիմնախնդիրը համամոլորակային հիմնախնդիրներից ամենահինն է:
- 3) Պարենային հիմնախնդիրը բնորոշ է մեծամասամբ զարգացած երկրներին:
- 4) Զարգացող երկրների միայն չնչին մասում է պարենամթերքի արտադրության աճը հետ մնում բնակչության աճի տեմպերից:

56

Գրել այն գետերի համարները, որոնք հոսում են Աֆրիկայում.

- | | |
|-----------|-----------|
| 1) Շարի | 5) Հոենու |
| 2) Ենիսեյ | 6) Կոնգո |
| 3) Նեղոս | 7) Մուրեյ |
| 4) Օրինկո | 8) Օրանժ |

57

Գրել այն երկրների համարները, որոնք ունեն զարգացած շերամապահություն.

- | | |
|-------------|----------------------------|
| 1) Շվեդիա | 5) Իսլանդիա |
| 2) Չինաստան | 6) Հնդկաստան |
| 3) Եգիպտոս | 7) Կորեայի Հանրապետություն |
| 4) Բոլիվիա | 8) Խորվաթիա |

58

Գրել այն ազգերի համարները, որոնց ներկայացուցիչների թիվն անցնում է 100 մլն-ը.

- | | |
|-----------------|-----------------|
| 1) փենջափցիներ | 5) բրազիլացիներ |
| 2) բենգալացիներ | 6) բիհարցիներ |
| 3) պարսիկներ | 7) հույներ |
| 4) հրեաներ | 8) վրացիներ |

59

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ձիթենու մշակությամբ:

- | | |
|--------------|----------------------------|
| 1) Շվեդիա | 5) Իսլանդիա |
| 2) Վրաստան | 6) Իսպանիա |
| 3) Հունաստան | 7) Կորեայի Հանրապետություն |
| 4) Բոլիվիա | 8) Իտալիա |

60

Գրել ՀՀ այն քաղաքների համարները, որոնք գտնվում են Արփա գետի ավազանում.

- | | |
|--------------|--------------|
| 1) Վարդենիս | 5) Սիսիան |
| 2) Ջերմուկ | 6) Եղեգնաձոր |
| 3) Դաստակերտ | 7) Վայք |
| 4) Մարտունի | 8) Վեդի |

61

Գրել ՀՀ այն էլեկտրակայանների համարները, որոնք Որոտանի ավազանում են:

- | | |
|-------------|----------------|
| 1) Արգնիի | 5) Սպանդարյանի |
| 2) Կեչուտի | 6) Չորագետի |
| 3) Քանաքեռի | 7) Տաթևի |
| 4) Մեծամորի | 8) Շամբի |

62

Տրված գետերի համարները դասավորել ըստ դրանց ջրառատության աճման կարգի.

- 1) Ամազոն
- 2) Հոնոս
- 3) Կոնգո

63

Տրված անապատների համարները դասավորել ըստ դրանց մակերեսի աճման կարգի.

- 1) Մեծ Վիկտորիա
- 2) Ատակամա
- 3) Սահարա

64

Լոնդոնում ժամը 10-ն է, Այդ պահին ժամը քանի՞ սը կլինի Մոսկվայում (Երբորդ ժամային գոտի):

65

Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում մարտի 21-ի կեսօրին:

(66-67) Պետության բնակչության թիվը 1 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 25 000 մարդ է, իսկ մահացածների թիվը՝ 10 000 մարդ:

66

Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

67

Որոշել բնական աճի գործակիցը (%):

68

Երկրի բնական գազի պաշարները կազմում են 6,9 մլրդ խմ, տարեկան հանույթը՝ 230 մլն խմ: Որքա՞ն է ռեսուրսապահովվածությունը:

Ճապոնիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Արտահաման մեջ գերակշռում են մեքենաներն ու սարքավորումները:
- 2) Տնտեսության զարգացման մակարդակով առաջինն է Արևելյան Ասիայում:
- 3) Թույլ է ապահովված հումքի և վառելիքի սեփական պաշարներով:
- 4) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 5) Ավտոճանապարհային ցանցի համար բնորոշ են արագընթաց լայնահուն մայրուղիները:
- 6) Բեռնաշրջանառության մեջ մեծ է գետային տրանսպորտի բաժինը:

ՀՀ անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Խոզաբուծությունն առավել զարգացած է Գեղարքունիքի և Շիրակի մարզերում:
- 2) Թռչնաբուծական ֆաբրիկաներն առավելապես տեղաբաշխված են խոշոր քաղաքների կամ արդյունաբերական կենտրոնների մոտակայքում:
- 3) Ոչխարաբուծությունն առավել զարգացած է նախալեռնային և լեռնային շրջաններում:
- 4) Արոտավայրերի գերբեռնվածությունը և գերարածեցումը բնապահպանական հիմնախնդիրներ են առաջացնում:
- 5) Խոշոր եղջերավոր անասնաբուծությունը մյուս ճյուղերի համեմատ խիստ անհամաչափ է տեղաբաշխված:
- 6) Անասնապահության համախառն արտադրանքի մեծ մասը բաժին է ընկնում մանր եղջերավոր անասնապահությանը: